

Մասնաճյուղում նույնականացում



Տերմինալների միջոցով նույնականացում



Հեռակա նույնականացում



Telcell Wallet Էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվի բացումը և Օգտատիրոջ նույնականացումը իրականացվում է՝

1) ֆիզիկական անձի պահանջով

2) դրամական արագ փոխանցումների համակարգից օգտվելու դեպքում

3) Տերմինալների միջոցով՝ հաճախորդների ներգրավման մասնագետի աջակցությամբ (օր. «Պրեմ Ստենդ» ՍՊԸ կրպակներում, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բաժանմունքներում տեղադրված տերմինալներով գործառնություններ կատարելիս)

4) առցանց եղանակով՝ կենսաչափական տվյալների ներբեռնմամբ

5) Telcell Wallet դրամապանակի հաշվառման հաշվին բանկային քարտ կցելու միջոցով

Չնույնականացված ֆիզիկական անձ Օգտատերը նույնականացում անցնելու նպատակով, ինչպես նաև դրամական արագ փոխանցումների համակարգից օգտվելու դեպքում պարտավոր է անձը հաստատող փաստաթղթով այցելել «Թեյ Սեյ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) որևէ մասնաճյուղ: Նույնականացման գործընթացի ժամանակ Օգտատերը պարտավոր է Ընկերության աշխատակցին ներկայացնել անձնագիր կամ նույնականացման քարտ պատճենահանման նպատակով, և տրամադրել հետևյալ տեղեկությունները՝ հաշվառման հասցե, բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե:

ՀՀ քաղաքացին (քաղաքացու ցանկությամբ՝ Ընկերության աշխատակցի աջակցությամբ) Տերմինալի միջոցով նույնականացում անցնելու համար տերմինալի «Նույնականացում» դաշտում լրացնում է անձնագրի (նույնականացման քարտի) համարը, որից հետո անձնագիրը ներկայացնում է Ընկերության համապատասխան աշխատակցին՝ անձնագրի (նույնականացման քարտի) նկարով նույնականացում անցնելու և ՀՀ քաղաքացու վերաբերյալ «Նորք» տեղեկատվական կենտրոնի բազայի միջոցով տեղեկատվության հավաստիության ստուգման համար: Ընկերության աշխատակիցը անձնագրի (նույնականացման քարտի) լուսանկարով կատարում է քաղաքացու նույնականացում, պատճենահանում (սքանավորում) է նույնականացման համար ներկայացված փաստաթուղթը և համապատասխանելու դեպքում հավաստում է համակարգում, որից հետո քաղաքացին ստանում է «Պրեմիում» նույնականացման կարգավիճակ:

Օգտատերը մուտք է գործում բջջային հավելվածի «Անձնական էջ», որտեղից ընտրում է «Բարձրացնել կարգավիճակը» դաշտը՝ նույնականացում անցնելու համար
Քայլ 1. Օգտատերը նկարում է նույնականացման քարտի կամ անձնագրի նկարով էջը, այնուհետև դարձերեսը՝ հետևի կողմը (միայն նույնականացման քարտի դեպքում),
Քայլ 2. Օգտատերը նկարում է իր դեմքը՝ նույնականացման քարտի կամ անձնագրի նկարով էջը բաց վիճակում՝ դեմքի մոտ պահած (selfie):
Քայլ 3. Նկարները ներբեռնում է Telcell Wallet դրամապանակի հավելվածում*:

Բանկային քարտը Telcell Wallet դրամապանակին կցելու համար անհրաժեշտ է՝
 1. Հայաստանում գրանցված բանկի կողմից թողարկված քարտ,
 2. քարտային հաշվին հասանելի մնացորդ՝ 100 ՀՀ դրամի չափով:
 Օգտատերը Telcell Wallet դրամապանակում լրացնում է իր բանկային քարտի տվյալները՝ առաջնորդվելով դրամապանակի համապատասխան դաշտում նշված ցուցումներով, և նույնականացումը իրականացվում է կցված քարտի տվյալներով:
 Կցման գործընթացն ավարտելու նպատակով կցվող բանկային քարտի հաշվից 100 ՀՀ դրամ գումարը փոխանցվում է Օգտատիրոջ Telcell Wallet դրամապանակի հաշվին, և տրվում է «Ստանդարտ» նույնականացման կարգավիճակ:

* Telcell համակարգի օպերատորը աշխատանքային 1 օրում հատուկ միջոցներով ստուգում է տվյալները, ինչից հետո:
 - կամ անձի նույնականացումը համարվում է բարեհաջող ավարտված, և տրամադրվում է «Պրեմիում» կարգավիճակ,
 - կամ տրվում է բջջային հավելվածի միջոցով կրկին նույնականացում անցնելու հրահանգավորում,
 - կամ դադարեցվում է նույնականացումը, և Օգտատերը նույնականացում անցնելու համար պետք է այցելի Ընկերության որևէ մասնաճյուղ: